“Emerging Europe”
21 Օգոստոս 2017

Ղարաբաղյան հակամարտությունը սառեցվածից վերածվում է գործողի

Ռիչարդ Գիրագոսյան

Ուկրաինայում պատերազմը հանդես է գալիս որպես արևմտյան հավատարմության և եվրոպական անվտանգության վերաբերյալ լուծումների փորձաքար: Սակայն առաջանում է մեկ այլ անվտանգության սպառնալիք՝ արագ էսկալացիայի իրական վտանգով: Այս նոր սպառնալիքը, որը սկիզբ է առնում Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից, Հայաստանը և հայերով բնակեցված Ղարաբաղը դիմմարտի է մղում Ադրբեջանի դեմ:

Երկար ժամանակ համարվելով նախկին ԽՍՀՄ տարածքի սառեցված հակամարտություններից մեկը, վերջին տարիներին ԼՂՀ-ի համար պայքարը սառեցվածից վերածվել է գործող հակամարտության: Որպես հանդիմանություն Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շարունակվող դիվանագիտական միջնորդությանը, 2016թ. ապրիլը նշանավորվեց որպես 1990-ականներից ի վեր առավել լարված պատերազմական գործողություն:

Քանի որ այն աշխարհագրական առումով հեռու և խմորվող հակամարտություն է, քիչ հայտնի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունը հիմնականում թերագնահատվում է: Չնայած ծանրաշարժ խաղաղարար գործընթացին, որը ոչ խաղաղություն է, ոչ էլ մեծ հաշվով գործընթաց, հակամարտությունը արևմտյան բարենպաստ անտարբերության ժամանակահատված է ապրել: Նման ռազմավարական անուշադրությունը հատկապես վտանգավոր է երեք հիմնական պատճառներով:

Առաջին, ավելի լայն ռազմավարական տեսանկյունից, Ղարաբաղյան հակամարտությունը առանձնանում է որպես մեկ տեղական վիճաբանություն, որին ներհատուկ է ռազմական գործողությունների վերսկսման դեպքում արագորեն ընդլայնվելու վտանգը: Մասնավորապես, այս հակամարտությունը կարող է անմիջականորեն ներգրավել մի շարք տարածաշրջանային ուժերի, ինչի արդյունքում 2016թ. քառօրյա մարտական գործողությունների կրկնությունը կստիպի Թուրքիային,

Ռուսաստանին և նույնիսկ Իրանին արձագանքել: Ի հավելումն, հարկ է նշել, որ անդրադարձնելով սխալ հաշվարկն ու հարկադրված լինելով գործել, Ղարբաղը կարող է Առաջին համաշխարհային պատերազմից շատ ավելի լայնածավալ առճակատման էսկալացիայի պատճառ դառնալ:

Մտահոգության երկրորդ պատճառը բխում է Ռուսաստանի հնարավոր արձագանքից վերսկսվող մարտական գործողություններին: Ինչ վերաբերում է նախորդ տարվա մարտական գործողություններին, Ռուսաստանը միակ խաղացողն էր, որն ի վիճակի էր բավականաչափ արագ արձագանքել՝ մարտական գործողություններն արդյունավետ դադարեցնելու համար: Չնայած այդ փորձին, Ռուսաստանն այս անգամ ավելի պատրաստված է և կարող է օգտագործել մարտական գործողությունները՝ որպես տարածաշրջանում ռուս խաղաղապահներին տեղակայելու հնարավորություն: Ռուսական հզորության պրոյեկցիայի նման սցենարը կարող է հնարավոր լինել, քանի որ Ռուսաստանն է միակ հնարավոր արձագանքողը, և հավանական է, որ ռուսական ներկայության բացակայությունը Լեռնային Ղարաբաղում վաղուց Մոսկվայում դիտարկվում է որպես անընդունելի թուլություն:

Եվրոպական տեսանկյունից նման սցենարը կարող էր միայն ամրացնել ռուսական գերիշխանությունն այսպես կոչված «մերձավոր արտասահմանի» այս հատվածում, դրանով իսկ տարածքն արդյունավետ ենթարկելով Ռուսաստանի ազդեցությանը: Այս երրորդ պատճառը նույնպես մեծապես վտանգում է ԵՄ-ի վերջին քայլերը՝ ներգրավելու թե՛ Հայաստանին, որի հետ կապված նախատեսվում է նոր համաձայնագրի ստորագրում նոյեմբերին, և թե՛ Ադրբեջանին, որի նորացված հետաքրքրությունը ԵՄ-ի հետ նոր ռազմավարական գործընկերության նկատմամբ ողջունվում է որպես երկար սպասված հաջողություն Արևելյան գործընկերության ծրագիրը (ԱլԳ) փրկելու ուղղությամբ:

Լարվածության էսկալացիայի այս ֆոնի վրա և վերսկսած մարտական գործողությունների իրական սպառնալիքի դեմ, Ղարաբաղյան հակամարտության ապա-էսկալացիայի հրատապ անհրաժեշտություն է առաջանում երկու ոլորտներում ներգրավվելու միջոցով: Առաջինը, առճակատման շուրջ համագործակցության խոստումով ԵՄ-ը կարող է աշխատել ոչ թե ռուսական շահերի դեմ, այլ՝ կողմ, փնտրելով առավել հավակնոտ քաղաքականություն՝ Լեռնային Ղարաբաղում տեղական պաշտոնյաների և ակտորների ներգրավմամբ: Հիմնվելով «չեզոք կարգավիճակի» մոտեցման վրա, որտեղ ցանկացած միջամտություն Ղարաբաղում չի հանգեցնի ճանաչման կամ մեղադրանքների, ԵՄ-ը կարող է վերականգնել դանդաղած դիվանագիտական գործընթացը՝ օգտագործելով թե՛ Հայաստանի հետաքրքրվածությունը ԵՄ-ով, թե՛ Ադրբեջանի վրդովմունքը՝ ԵԱՀԿ միջնորդական առաքելության առաջընթացի բացակայության նկատմամբ:

Երկրորդ հնարավորությունը շատ ավելի շոշափելի և կենսունակ է և ներառում է ուղղակի աջակցություն «երկրորդ փուլի» ջանքերի համար՝ Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի միջև: Սիներգիայի և Հայաստանի և Թուրքիայի միջև նմանատիպ «մարդ-մարդ» շփման հաջողությունների շնորհիվ, ուշադրության կենտրոնացումը «երկրորդ փուլի» ներգրավվածությունը ուղղված կլինի հետևյալ երեք կարևոր նպատակների. բարձրացնել դիսկուրսի մակարդակը և մարտահրավեր նետել հակամարտության պատմությանը յուրաքանչյուր երկրում, ապահովել քաղաքականացվածությունը և ընդլայնել հետագա պաշտոնական շփումների հնարավորությունները, յուրաքանչյուր հասարակության մեջ սերմանել փոխզիջման անհրաժեշտության պատրաստակամություն. մի կարևոր քայլ, որը յուրաքանչյուր դեպքում լրջորեն անուշադրության է մատնվել:

Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի շուրջ նոր պատերազմի վերսկսկման սպառնալիքի ռազմավարական նշանակությունը, հրատապ է ներգրավվել ներկա պահին, նախքան այս գործող հակամարտությունը վտանգավոր կերպով դուրս չի եկել վերահսկողությունից:

* Ռիչարդ Գիրագոսյան, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն (www.regional-studies.org):

(English original: http://emerging-europe.com/voices/voices-regions/nagorno-karabakh-conflict-moves-from-frozen-to-kinetic/)